შეფასებისა და გამოცდების ეროვნული ცენტრი

հուլիս, 2023

# Երաժշտության թեստ

## Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Թեստը բաղկացած է երկու մասից. I ունկնդրման մաս , II փակ և բաց առաջադրանքներ, որոնք ներկայացված են առանց ունկնդրման նյութերի:

Ունկնդրման մասի համար հատկացված է սահմանված ժամանակ: Թեստի էլեկտրոնային բուկլետում յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան հրահանգում նշված է առաջադրանքը կատարելու համար հատկացված կոնկրետ ժամանակը:

Մնացած ժամանակը ըստ Ձեր հայեցողության բաժանեք թեստի II մասի առաջադրանքները կատարելու համար:

**Թեստի առավելագույն միավորն է՝ 70:**

**Թեստի վրա աշխատելու համար տրվում է 4 ժամ:**

**Մաղթում ենք հաջողություն :**

Հաջորդ էջին անցնելու կամ ետ վերադառնալու համար կարող եք կիրառել ստեղնաշարի կոճակները:

I մաս՝ ունկնդրում

Ունկնդրման մասն ընդգրկում է տասը առաջադրանք:

Առաջադրանքներ № 1-6:

Հրահանգ: Առաջին վեց առաջադրանքում յուրաքանչյուրի  համար հատկացված է մեկ երաժշտական հատված և երկու հարց: Յուրաքանչյուր հարցին կից  տրվում է չորս ենթադրական պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Ընտրեք պատասխանը և պատասխանների թերթիկի վրա  X նշանով նշեք համապատասխան վանդակը: Ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավոր, համապատասխանաբար, յուրաքանչյուր առաջադրանք՝ երկու միավոր:

Առաջադրանքի համար նախատեսված երաժշտական հատվածը լսում եք երկու անգամ: Առաջին և երկրորդ ունկնդրումների միջև  դադարը  կազմում է 20 վայրկյան:  Նախքան երաժշտական հատվածի ունկնդրելը տրվում է 10 վայրկյան՝ առաջադրանքի հարցերը կարդալու համար:

*Առաջադրանքները տրված են հաջորդ էջից:*

(2) **Առաջադրանք № 1.**

**Նախքան առաջին երաժշտական հատվածն  ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին.**

**1.1 Վրաստանի ո՞ր տարածաշրջանի երգ է:**

ա) Աջարիայի,

բ) Կախեթիի,

գ) Իմերեթիի,

դ) Գուրիայի:

**1.2 Ո՞ր ժանրին է պատկանում երգը:**

ա) Սիրային,

բ) արշավային,

գ) խնջույքի,

դ) աշխատանքային:

(2) **Առաջադրանք № 2.**

**Նախքան երկրորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին.**

**2.1 Ո՞վ է երաժշտության հեղինակը:**

ա) Մելիտոն Բալանչիվաձեն,

բ) Դիմիտրի Արաղիշվիլին,

գ) Վիկտոր Դոլիձեն,

դ) Զաքարիա Փալիաշվիլին:

**2.2 Ո՞ր գործիքային կազմն է կատարում հատվածը:**

ա) Կամերային-գործիքային անսամբլը,

բ) փայտե փողային երաժշտական գործիքների նվագախումբը,

գ) սիմֆոնիկ նվագախումբը,

դ) լարային-աղեղնավոր երաժշտական գործիքների նվագախումբը:

(2) **Առաջադրանք № 3.**

**Նախքան երրորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին.**

**3.1 Ո՞վ է երաժշտության հեղինակը:**

ա) Յոհաննես  Բրամսը,

բ) Ռոբերտ Շումանը,

գ) Ֆելիքս Մենդելսոնը,

դ) Լյուդվիգ վան Բեթհովենը:

**3.2 Ո՞ր ժանրին է պատկանում ստեղծագործությունը:**

ա) Սիմֆոնիա,

բ) կոնցերտ,

գ) սոնատ,

դ) ուվերտյուրա:

(2) **Առաջադրանք № 4.**

**Նախքան չորրորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին.**

**4.1 Ո՞ր ուղղությանը կամ դարաշրջանին է պատկանում ստեղծագործությունը:**

ա) Կլասիցիզմին,

բ) բարոկկոին,

գ) իմպրեսիոնիզմին,

դ) ռոմանտիզմին:

**4.2 Ո՞ր օպերային ձայնն է կատարում հատվածը:**

ա) Սոպրանոն,

բ) մեցցո-սոպրանոն,

գ) կոնտրալտոն,

դ) կոլորատուրային սոպրանոն:

(2) **Առաջադրանք № 5.**

**Նախքան հինգերորդ երաժշտական հատվածն  ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին.**

**5.1 Ո՞վ է երաժշտության հեղինակը:**

ա) Ժան Ֆիլիպ Ռամոն,

բ) Յոհան Սեբաստիան Բախը,

գ) Լուի Կլոդ Դակենը,

դ) Գեորգ Ֆրիդրիխ Հենդելը:

**5.2 Սյուիտի ո՞ր պարն է ունկնդրած հատվածը:**

ա) Սարաբանդան,

բ) Ժիգան,

գ) ալեմանդան,

դ) կուրանտան:

(2) **Առաջադրանք № 6.**

**Նախքան վեցերորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին.**

**6.1 Ո՞վ է երաժշտության հեղինակը:**

ա) Առնոլդ Շյոնբերգը,

բ) Օտտորինո Ռեսպիգին,

գ) Կարլ Օրֆը,

դ) Օլիվյե Մեսիանը:

**6.2 Ո՞ր ժանրի ստեղծագործությունից է հատվածը:**

ա) Մեսսայից,

բ) կանտատից,

գ) օպերետայից,

դ) մյուզիքլից:

(1) Առաջադրանք № 7.

<u>Հրահանգ։ </u>Ունկնդրեք երաժշտական հնչյունների շարքը։ Նոտային գրառման մեջ տրված լադի չորս տարբերակից ընտրեք ունկնդրած լադի համապատասխան տարբերակը և պատասխանների թերթիկի վրա X նշանով նշեք համապատասխան վանդակը։

Հնչյունների շարքը լսեք երկու անգամ։

Նախքան ունկնդրելը տրվում է 5 վայրկյան՝ նոտային գրառումը վերանայելու համար։



(1) **Առաջադրանք № 8.**

<u>Հրահանգ:</u> Լսեք երաժշտական արտահայտությունը (ֆրազ)։ Նոտային գրառման մեջ տրված չորս տարբերվող ռիթմիկ ֆիգուրացիաներից ընտրեք ունկնդրած համապատասխան տարբերակը և պատասխանների թերթիկի վրա X նշանով նշեք համապատասխան վանդակը։

Երաժշտական արտահայտությունը (ֆրազ) լսեք երկու անգամ։

Նախքան ունկնդրելը տրվում է 5 վայրկյան՝ նոտային գրառումը վերանայելու համար։

ա)


բ)


գ)


դ)


(5) Առաջադրանք № 9.

*Երաժշտական թելադրություն:*

<u>Հրահանգ:</u> Ունկնդրեք մեղեդին և գրառեք նոտային համակարգում: Մեղեդին միաձայնային է, ութ տակտանոց և տրված է մեկ տոնայնության մեջ: Այն լսելու և գրառելու համար տրվում է 15 րոպե: Մեղեդին լսում եք ձայնագրությամբ հինգ անգամ, յուրաքանչյուր հաջորդող ունկնդրման միջև դադարը կազմում է 2 րոպե:

Թելադրությունը տրված է <u>*Ռե մաժոր (D dur)*</u> տոնայնության մեջ:

<u>*Ձեր կողմից գրառված մեղեդին տեղափոխեք պատասխանների թերթիկի վրա տրված նոտային համակարգ, գրչով:*</u>

(13) Առաջադրանք № 10.

*Երաժշտական ստեղծագործության վերլուծություն*

Հրահանգ: Վերլուծեք երաժշտական ստեղծագործությունը՝ ձայնագրության և նոտային գրառման հիման վրա:

Երաժշտական ստեղծագործությունը լսում եք երեք անգամ, յուրաքանչյուր հաջորդող ունկնդրման միջև դադարը կազմում է 2 րոպե: Նախքան ունկնդրելը տրվում է 30 վայրկյան՝ առաջադրանքի հարցերը վերանայելու համար:

*Հարցերը դիտեք հաջորդ երկու էջի վրա:*

(2) 1. Ո՞ր ժանրին է պատկանում տրված ստեղծագործությունը: Հիմնավորեք ձեր տեսակետը:

(3) 2. Որոշեք.

ա) ստեղծագործության տոնայնությունը,

բ) ստեղծագործության երաժշտական ձևը,

գ) ստեղծագործության 63-66-րդ տակտերում տրված կադանսի մեջ ներառված ակորդների հարմոնիկ (ներդաշնակ) ֆունկցիաները:

(3) 3. Բնութագրեք, թե ինչպես է զարգանում ստեղծագործությունը գեղարվեստա-հուզական տեսանկյունից: Վերլուծեք և նկարագրեք երաժշտության արտահայտչամիջոցները (ինչպիսի՞ մեղեդի, ռիթմ, տեմպ, ռեգիստր, ներդաշնակություն (հարմոնիա), լադատոնայնություն, ֆակտուրա, և այլն), որոնք հատկապես կարևոր են դրա երաժշտագեղարվեստական բովանդակությունը ստեղծելու համար:

(2) 4. Ունկնդրած ստեղծագործության երաժշտական բնութագրիչների հիման վրա, որոշեք կոմպոզիտորի ինքնությունը և այն ուղղությունը, որին նա պատկանում է:

(3) 5. Բնութագրեք կոմպոզիտորի ստեղծագործականությունը և նշեք, թե ինչ նորարարություն է նա ներմուծել երաժշտության ոլորտում: Քննարկեք ունկնդրած ստեղծագործությունը պատմամշակութային տեսանկյունից: Որոշեք կոմպոզիտորի ստեղծագործականության մեջ այն ժանրի նշանակությունը, որին պատկանում է ստեղծագործությունը:

*Երաժշտական ստեղծագործության նոտային գրառումը դիտեք հաջորդ էջերում.*


Andante très expressif
pp
con sordina
2
2
5
2
9


12
Tempo rubato
15
pp
peu a peu cresc. et animé
18


21
24
8va
dim. molto
Un poco mosso
pp
27


29
31
p
p
33


cresc.
85
En animant
87
più cresc.
89


41
f
2
dim.
Calmato
43
pp
45


47
49
a Tempo I
8va
ppp
51


(8va)
2
2
58
55
57
2



59
pp
62
2
pp
morendo jasqu'à la fin
66


68
70

II մաս

Առաջադրանքներ № 11-28.

Հրահանգ: Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Ընտրեք պատասխանը և դրեք X նշանը պատասխանների թերթիկի համապատասխան վանդակում: Մի՛ գործածեք ոչ մի ուրիշ նշում (հորիզոնական կամ ուղղահայաց գծեր, շրջագծում և այլն), քանի որ դրանք չեն ընկալվի էլեկտրոնային ծրագրի կողմից: Եթե ցանկանում եք ուղղել պատասխանների թերթիկի վրա նշված պատասխանը, ամբողջությամբ ներկեք վանդակը, որտեղ դրել եք X նշանը, որից հետո նշեք պատասխանի նոր տարբերակը (դրեք X նշանը նոր վանդակում): Հնարավոր չէ երկրորդ անգամ ընտրել այն պատասխանը, որն ուղղել եք: Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:

(1) **Առաջադրանք № 11.**

**Ո՞ր բանաստեղծի բանաստեղծությունն է ընկած Կիազոյի մեներգի (արիա) հիմքում՝ «Դաիսի» օպերայի երկրորդ գործողությունից:**

ა) Իլիա Ճավճավաձեի,

ბ) Շոթա Ռուսթավելիի,

გ) Ակակի Ծերեթելիի,

დ) Նիկոլոզ Բարաթաշվիլիի:

(1) **Առաջադրանք № 12.**

**Թվարկածներից ո՞րը *բնորոշ չէ* օրատորիայի ժանրին:**

ա) Անսամբլային երգը,

բ) նվագախմբային երաժշտությունը,

գ) թատերական բեմադրումը,

դ) երգչախմբային երգը:

(1) **Առաջադրանք № 13.**

**Ինչպե՞ս է կոչվում երաժշտության մեջ բազմաձայն հյուսվածքը, որի յուրաքանչյուր ձայնն ունի անկախ և հավասար նշանակություն:**

ա) Ակորդային,

բ) հոմոֆոնիկ,

գ) պոլիֆոնիկ,

դ) մոնոդիկ:

(1) **Առաջադրանք № 14.**

**Երաժշտական զարգացման ո՞ր մեթոդն է ընկած Էյտոր Վիլլա-Լոբոսի «Բրազիլական բախիանաներ» շարքի հիմքում։**

ա) Իմիտացիա,

բ) կոլաժ,

գ) ստիլիզացիա,

դ) մեջբերում։

(1) **Առաջադրանք № 15.**

**Ո՞ր օպերայում է ընթանում գործողությունը Իսպանիայում:**

ա) «Տուրանդոտ»-ում,

բ) «Ռիգոլետտո»-ում,

գ) «Ֆիգարոյի ամուսնություն»-ում,

դ) «Լոհենգրին»-ում:

(1) **Առաջադրանք № 16.**

**Ինչպե՞ս է կոչվում երաժշտական գործիքի վրա մի հնչյունից  մյուսը մատներն արագ սահեցնելով հնչեղություն ստանալու հնարքը:**

ա) Տրեմոլո,

բ) ֆլաժոլետ,

գ) ստակկատո,

դ) գլիսանդո:

(1) **Առաջադրանք № 17.**

**Ո՞ր ժանրը *բնորոշ չէ* եվրոպական Վերածննդի դարաշրջանի երաժշտությանը:**

ա) Մադրիգալը,

բ) մեսսան,

գ) օրատորիան,

դ) մոտետը:

(1) **Առաջադրանք № 18.**

**Ո՞ր երաժշտական տերմինն է նշանակում տեմպի արագացում:**

ა) Ritardando,

ბ) Accelerando,

გ) Diminuendo,

დ) Crescendo:

(1) **Առաջադրանք № 19.**

**Ո՞ր օպերայի նվագախմբային նախերգանքը *<u>կապված չէ</u>* օպերայի հետ երաժշտական թեմաներով:**

ա) Կարլ Վեբերի «Ազատ հրաձիգ»,

բ) Ժորժ Բիզեի «Կարմեն»,

գ) Ջոակինո Ռոսսինիի «Սևիլյան սափրիչ»,

դ) Ջուզեպպե Վերդիի «Աիդա»:

(1) **Առաջադրանք № 20.**

**Ո՞ր ժանրը *ներկայացված չէ* Յոհաննես Բրամսի ստեղծագործություններում:**

ա) Օպերան,

բ) սերենադը,

գ) ուվերտյուրան,

դ) սիմֆոնիան:

(1) **Առաջադրանք № 21.**

**Վիեննայի դասականներից Բեթհովենը ո՞ր երաժշտական գործիքն է առաջին անգամ ներմուծել սիմֆոնիայի մեջ:**

ա) Տրոմբոնը,

բ) կլառնետը,

գ) գալարափողը (վալդհոռն),

դ) հոբոյը:

(1) **Առաջադրանք № 22.**

**Ո՞ր կոմպոզիտորն է գրել  երաժշտությունը «Խանումա», «Լիր արքա» «Կովկասյան կավճե շրջան» ներկայացումների համար:**

ա) Գիա Ղանչելին,

բ) Ջանսուղ Կախիձեն,

գ) Գիորգի Ցաբաձեն,

դ) Բիձինա Կվերնաձեն:

(1) **Առաջադրանք № 23.**

**Ինչպե՞ս է կոչվում կոնցերտի ժանրի վիրտուոզ դրվագը, որտեղ մենակատարը կատարում է երաժշտությունն առանց նվագախմբի նվագակցության:**

ա) Ռեպրիզ,

բ) կադենցիա,

գ) ֆանտազիա,

դ) մշակում:

(1) **Առաջադրանք № 24.**

**Ո՞ր կոմպոզիտորն էր գրում լիբրետո իր սեփական օպերաների համար:**

ա) Քրիստոֆ Գլյուկը,

բ) Ջուզեպպե Վերդին,

գ) Ռիխարդ Վագները,

դ) Ջովաննի Բատիստա Պերգոլեզին:

(1) **Առաջադրանք № 25.**

**Բարոկկոյի դարաշրջանում ո՞ր երաժշտական ժանրն էր նախատեսված ֆուգայի համար՝ որպես նախերգանք:**

ա) Պրելյուդը,

բ) ուվերտյուրան,

գ) կանցոնան,

դ) սոնատը:

(1) **Առաջադրանք № 26.**

**Ո՞ր ժանրին է պատկանում Ժակ Օֆենբախի «Օրփեոսը ստորգետնյա աշխարհում» ստեղծագործությունը:**

ա) Օպերետի,

բ) վոդևիլի,

գ) օպերայի,

դ) մյուզիքլի:

.

(1) **Առաջադրանք № 27.**

**Ո՞ր երաժշտական ձևին է պատկանում ռեֆրենը:**

ա) վարիացիոն,

բ) ռոնդոյի,

գ) պարզ եռամաս,

դ) սոնատային:

(1) **Առաջադրանք № 28.**

**Ո՞ւմ ստեղծագործության հիման վրա է ստեղծվել Ֆելիքս Մենդելսոնի «Ամառային գիշերվա երազը» ուվերտյուրան:**

ա) Յոհան Վոլֆգանգ Գյոթեի,

բ) Ուիլյամ Շեքսպիրի,

գ) Ֆրիդրիխ Շիլլերի,

դ) Ջորջ Բայրոնի:

Առաջադրանք № 29 - 32.

*Կառուցում նոտայից*

<u>Հրահանգ:</u> Կառուցեք և պատասխանների թերթիկի վրա տրված նոտաների համակարգի վրա գրառեք՝ ինտերվալը, ակորդները և լադը *<u>Դո դիեզ</u>* նոտայից:

(1) 29. Փոքր սեքստա:

(1) 30. Մաժոր սեքստակորդ:

(1) 31. Փոքր մաժոր սեպտակորդ:

(1) 32. Մեղեդային մինոր:

Առաջադրանքներ № 33-35.

*Համապատասխանության որոշում*

Հրահանգ: Առաջադրանքում տրված է թվարկացանկի երկու սյունակ: Որոշեք համապատասխանությունը դրանց միջև: Ձախ սյունակի յուրաքանչյուր տվյալին (1, 2, 3) համապատասխանում է աջ սյունակի *միայն մեկ* տվյալ (ա, բ, գ, դ, ե): Յուրաքանչյուր ընտրված համապատասխանությունը պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում նշեք X նշանով: Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:

(3) **Առաջադրանք № 33.**

**Որոշեք համապատասխանությունը կոմպոզիտորների և երաժշտական ստեղծագործությունների միջև.**

1. Շալվա Մշվելիձե
2. Դավիթ Թորաձե
3. Մելիտոն Բալանչիվաձե

ա) Սիմֆոնիա N 5 «Փիրոսմանի»

բ) Ռոմանս «Ես քեզ սպասում եմ»

գ) Օպերա «Դարեջան նենգը»

դ) Բալետ «Գորդա»

ե) Սիմֆոնիկ պոեմ «Զվիադաուրի»

(3) **Առաջադրանք № 34.**

**Որոշեք համապատասխանությունը վրացական կինոֆիլմերի և դրանց երաժշտության հեղինակների միջև.**

| | |
|---|---|
| 1. «Միմինո» | ա) Ռեզո Լաղիձե |
| 2. «Զինվորի հայրը» | բ) Գիա Ղանչելի |
| 3. «Վերջինը Սաբուդարայից» | գ) Բիձինա Կվերնաձե |
| | դ) Նոդար Գաբունիա |
| | ե) Սուլխան Ցինցաձե |

(3) **Առաջադրանք № 35.**

**Որոշեք համապատասխանությունը կոմպոզիտորների և այն ուղղությունների կամ դարաշրջանների միջև, որոնց ժամանակ նրանք գործունեություն էին վարում.**

1. Անտոնիո Վիվալդի
2. Ֆրեդերիկ Շոպենը
3. Յոզեֆ Հայդն

ա) Կլասիցիզմ

բ) Բարոկկո

գ) Ռենեսանս

դ) Ռոմանտիզմ

ե) Միջնադար

Առաջադրանքներ № 36-40.

*«Ճշմարիտ է-Սխալ է»*

Հրահանգ: Որոշեք տրված դրույթը ճշմարիտ է թե սխալ, եթե համարում եք, որ դրույթը ճշմարիտ է, ապա նշեք X նշանը համապատասխան վանդակում, նման դեպքում մեկնաբանություն անել չի պահանջվում, *իսկ եթե համարում եք, որ դրույթը սխալ է, ապա համապատասխան վանդակում դրեք X նշանը և հատկացված տեղում գրեք ճիշտ բացատրությունը:*

Սխալ դրույթի դեպքում, տրված բացատրությանը համապատասխանեցրել ճիշտ տերմին/բառ կամ տրված տերմինի/բառի համար գրեք ճիշտ բացատրություն: Հաշվի առեք, որ պատասխանը չի ընդունվի, եթե տրված բացատրության դրական ձևը փոխեք բացասականով կամ ընդհակառակը: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

(1) **Առաջադրանք № 36.**

*Կավատինան* օպերային ժանրի գործիքային ձևն է։

(1) **Առաջադրանք № 37.**

*«Tranquillo»* -ն  երաժշտական դինամիկան արտահայտող եզրույթն է:

(1) **Առաջադրանք № 38.**

*Անտիֆոնը* երկու երգչախմբերի փոխնիփոխ երգեցողությունն է:

(1) **Առաջադրանք № 39.**

*Արպեջոն* երաժշտական եզրույթ է, որը նշանակում է լարային-աղեղնավոր երաժշտական գործիքի լարը մատով քաշելով կատարում:

(1) **Առաջադրանք № 40.**

*Սիմֆոնիկ պոեմը* բանաստեղծական տեքստի վրա հիմնված վոկալ-գործիքային ցիկլն է:

Առաջադրանքներ № 41-42.

*Ժամանակագրության որոշում*

<u>Հրահանգ:</u> Ժամանակագրական առումով՝ հնագույնից դեպի նորագույնը դասավորեք թվարկացանկը: Պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում, ժամանակագրական հաջորդականությունը նշված է թվանշաններով՝ 1-ից մինչև 4-ը: Գրեք պատասխանները վանդակում՝ ընտրված թվանշանի երկայնքով, այբուբենի համապատասխան տառերով (ա, բ, գ, դ): Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

(1) **Առաջադրանք № 41.**

**Ժամանակագրական առումով դասավորեք սիմֆոնիկ ստեղծագործությունները՝ ըստ դրանց ստեղծման ժամանակաշրջանի.**

ա) Սիմֆոնիկ սյուիտ «Շեհերազադե»,

բ) «Անավարտ» սիմֆոնիա,

գ) Սիմֆոնիկ պիես «Պասիֆիկ 231»,

դ) «Հերոսական» սիմֆոնիա:

(1) **Առաջադրանք № 42.**

**Ժամանակագրական կարգով դասավորեք բալետային ստեղծագործությունների թվարկացանկը ՝ ըստ դրանց ստեղծման ժամանակաշրջանի.**

ա) «Մարդուկ Զարդուկ»,

բ) «Ռոմեո և Ջուլիետ»,

գ) «Հազարան Բլբուլ»,

դ) «Ժիզել»: